

ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
5 տարեկանների ուսուցում
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
2020-2021 ՈՒՍՏԱՐԻ
«Իմացումի հրճվանք» ծրագրի ուսումնառության առաջին տարի

Ք. Երևան

«....»թ.

Պայմանագրի կողմերը

ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դպրոց-պարտեզը (այսուհետ՝ Դպրոց) ի դեմս տնօրեն **....-ի** (այսուհետ՝ տնօրեն) և-ի (այսուհետ՝ Սան) օրինական ներկայացուցիչ (այսուհետ՝ օրինական ներկայացուցիչ) կնքում են սույն պայմանագիրը **5 տարեկանների քառամյա ուսուցման** կազմակերպման վերաբերյալ:

1. Պայմանագրի առարկան

Կրթահամալիրում իրականացվող **«Ստեղծողի մոբիլ դպրոց»** հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) Սանի առանձնահատկություններին համապատասխան ուսուցման և զարգացման կազմակերպումն է, այդ թվում՝

- 1.1 ուսուցման կազմակերպում հարմար պարտեզային միջավայրում.
- 1.2 անընդհատ ուսուցման կազմակերպում «Իմացումի հրճվանք» կրթական ծրագրով, ամենօրյա գործունեության միջոցով
 - խոսքային.
 - մարզական՝ մարմնամարզություն, մարզական և այլ շարժուն խաղեր, լող, հեծանիվ.
 - կերպարվեստի-տեխնոլոգիական.
 - բնագիտական-թվաբանական.
 - երաժշտական՝ ունկնդրում, երգ, պար, երաժշտական խաղ-ներկայացումներ, ծես, դասարան-համույթ.
- 1.3 ուսուցման կազմակերպում թվային միջոցների՝ համացանցի, համակարգչի, ֆոտոխցիկի, ձայնագրիչի կիրառմամբ.
- 1.4 5 տարեկանների **քառամյա** ուսուցման ծրագրի արդյունքների հանրային ներկայացում
 - առաջին տարվա արդյունքների պարբերական ներկայացում ամենամսյա ստուգատեսի, ծեսի-տոնի կազմակերպմամբ,
 - 2-4-րդ տարիների արդյունքների ներկայացում կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված հանրակրթական ստուգատեսներին,
 - ուսուցման 3-րդ տարում ուսումնական բլոգի ստեղծում և վարում,
 - ուսուցման 4-րդ տարվա վերջում սովորողի գործունեության արդյունքների ամփոփման ստուգատես, այդ թվում՝ մայրենի խոսքի, օտար լեզուների, մաթեմատիկական, բնագիտական, տեխնոլոգիական, մեդիատեխնոլոգիական, երաժշտական, լողի, հեծանվավարության.
- 1.5 Դպրոցում և տանը համացանցի գործածում ուսումնական նպատակներով. դասվարի (խմբի), դասավանդողների բլոգները, մեդիագրադարանը, դպրոցի կայքը, դասվարի էլեկտրոնային հասցեն Ծրագրի, Սանի ուսումնական գործունեության մասին անընդհատ ու ամբողջական տեղեկատվության միջոց են.
- 1.6 ուսուցման առաջին տարում՝ երեքանգամյա առողջ սնունդ՝ նախօրոք հաստատված-հրապարակված ժամատախտակով և ճաշացանկով.
- 1.7 ուսուցման 2-4-րդ տարիներին սահմանված կարգով՝ որպես լրացուցիչ կրթական ծառայություն, Սովորողի՝ ընդգրկում լրացուցիչ կրթության պարապմունքներում, երկարացված օրվա ճամբարում.

- 1.8 թ. սեպտեմբերին սանը անցում է կատարում ուսուցման երկրորդ տարի,թ. սեպտեմբերին՝ 3-րդ տարի,թ. սեպտեմբերին՝ 4-րդ տարի:

2. Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի

- 2.1. ծանոթանալու Սանին առնչվող ցանկացած տեղեկության.
2.2. ՀՀ օրենսդրությամբ, [կրթահամալիրի ներքին կարգապահական կանոններով](#) որոշված կարգով պաշտպանելու Սանի շահերն ու իրավունքները.
2.3. ծանոթանալու ծրագրի տարեկան ծախսերի նախահաշվին և դրամական ծախսերի հաշվետվությանը.
2.4. անձամբ կամ ծրագրի ծնողական խորհրդի միջոցով վերահսկելու պայմանագրի կատարումը, ծախսերը.
2.5. ներկա լինելու, հետևելու, մասնակցելու խմբի ուսումնական գործունեությանը:

3. Օրինական ներկայացուցիչը պարտավոր է

- 3.1. պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթանալ ուսուցման ծրագրին, պայմանագրին և կատարել դրանցով նախատեսված պարտականությունները.
3.2. Դպրոցի ղեկավարի կամ դասվարի հրավերով ներկայանալ դպրոց.
3.3. ապահովել Սանի ներկայությունը ամենօրյա ուսումնական գործընթացին, մասնակցությունը ուսումնական ճամփորդություններին, ստուգատեսներին, տոներին.
3.4. ապահովել Սանին ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ անհատական նյութերով և միջոցներով, անհատական թվային գործիքով, տանը՝ համացանցով.
3.5. սահմանված կարգով ժամանակին տեղեկացնել Սանի բացակայությունների մասին.
3.6. ժամանակին և ամբողջությամբ վճարել ստացած ծառայությունների համար.
3.7. ունենալ էլեկտրոնային հասցե, օգտագործել էլեկտրոնային փոստը, ամեն օր հետևել կրթահամալիրի, դպրոցի կայքին, դաստիարակի բլոգին.
3.8. մասնակցել ծնողական կրթական-տեղեկատվական հավաքներին, ուսումնական օրացույցով որոշված նախագծերին, տոներին, ծեսերին, ծնողական սեմինարներին, պատասխանել դասվարի և տնօրենի էլեկտրոնային նամակներին:

4. Սանը իրավունք ունի.

- 4.1. ուսումնական նպատակներով օգտվելու Կրթահամալիրի ուսուցման բոլոր միջոցներից, այդ թվում՝ համակարգիչներից, համացանցից և թվային այլ միջոցներից, ուսումնական տարածքներից.
4.2. ուսուցման 2-4-րդ տարիներին սահմանված կարգով ընտրելու ուսումնական պլանով որոշված իր նախասիրած գործունեությունը (ընտրությամբ գործունեության ծրագիրը), լրացուցիչ կրթության ծավալը, սահմանված կարգով ստանալու հեռավար, առցանց ուսուցում:

5. Սանը պարտավոր է.

- 5.1. չխախտել կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնները, ուսումնառության ընթացքում հարգել այլոց իրավունքները.
5.2. պահպանել անվտանգության կանոնները.
5.3. սահմանված կարգով մասնակցել ուսումնական պլանով որոշված ճամբարներին, ստուգատեսներին, ծեսերին, տոներին.
5.4. սահմանված կարգով մասնակցել ուսումնական ճամփորդություններին, ուսումնահասարակական նախագծերի իրականացմանը.
5.5. ուսուցման 3-4-րդ տարում վարել իր ուսումնական բլոգը.
5.6. հետևել կայքին, դասավանդողների ուսումնական բլոգներին.
5.7. վարել էլեկտրոնային հասցե, պատասխանել ուսուցչի, Դպրոցի կազմակերպչի, Տնօրենի, գրասենյակի ղեկավարի, Կրթահամալիրի տնօրենի էլեկտրոնային նամակներին.

5.8. մասնակցել հիգիենիկ պահանջների պահպանմանը, ուսումնական տարածքի և գույքի խնամքին:

6. Տնօրենն իրավունք ունի

- 6.1. անհրաժեշտության դեպքում հրավիրելու Օրինական ներկայացուցչին.
- 6.2. Օրինական ներկայացուցչի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում պայմանագիրը լուծելու:

7. Տնօրենը պարտավոր է

- 7.1. Օրինական ներկայացուցչին ծանոթացնել ծրագրին, ուսումնառության պայմանագրին, կարգերին.
- 7.2. ապահովել կրթական ծրագրի իրականացման միջավայր, պայմաններ և կազմակերպում.
- 7.3. Օրինական ներկայացուցչի դիմումով և միջոցներով կազմակերպել պայմանագրով չնախատեսված լրացուցիչ ծառայություն՝ նրա հետ կնքելով լրացուցիչ պայմանագիր.
- 7.4. ըստ ծրագրի ծախսերի նախահաշվի՝ ապահովել գումարի ծախսը և սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել.
- 7.5. ապահովել 1-ին բուժօգնության, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, հատուկ մանկավարժի ծառայություն.
- 7.6. սահմանված կարգով կազմակերպել Սանի սնունդը.
- 7.7. Օրինական ներկայացուցչի ցանկությամբ և միջոցներով աջակցել Սանի՝ սահմանված կարգով տրանսպորտային տեղափոխման կազմակերպմանը.
- 7.8. կազմակերպել կրթական-տեղեկատվական ծնողական հավաքներ, ակումբներ:

8. Ծրագրի ֆինանսական ապահովումը

- 8.1. ըստ սովորողի թվի պետական դրամական հատկացումներ.
- 8.2. կրթահամալիրում պետական աջակցությամբ իրականացվող «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի դրամական հատկացումներ.
- 8.3. ուսումնառության պայմանագրով որոշված՝ Սանի Օրինական ներկայացուցչի վճար:

9 Պայմանագրի գինը և վճարման պայմանները

- 9.1. Ծրագրով նախատեսված Սանի սննդի, խնամքի ծառայությունների համար առաջին ուստարում Օրինական ներկայացուցչի վճարում է 220000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ. առաջին մուծումը՝ առնվազն 22000 (քսաներկու հազար) ՀՀ դրամը, կատարում է պայմանագրի կնքման պահին, ուսումնառության 2-րդ, 3-րդ, 4-րդ տարիներին՝ 130000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:
- 9.2. Պայմանագրով որոշված վճարումները սահմանված կարգով փոխանցել կրթահամալիրի հաշվարկային հաշվին՝ մինչև ընթացիկ ամսվա 5-ը:

10. Պայմանագրի ժամկետը, փոփոխման ու լուծման պայմանները

- 10.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև ուստարվա ավարտը՝ ...թ հունիսի 30-ը ներառյալ:
- 10.2. Կրթահամալիրի դպրոցից դպրոց տեղափոխվելիս Պայմանագիրը շարունակում է գործել: Կողմերի նախաձեռնությամբ անհրաժեշտ փոփոխությունները կատարվում են հավելվածում:
- 10.3. Պայմանագիրը կարող է փոխվել կողմերի համաձայնությամբ: Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:
- 10.4. Պայմանագիրը կարող է լուծվել կողմերից մեկի՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում:

10. Այլ պայմաններ

- 11.1. Ծրագրի ընթացքում Սովորողը այլ դպրոց կարող է տեղափոխվել իր տարիքին համապատասխան:
- 11.2. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն: Պայմանագրի էլեկտրոնային օրինակը հավասարազոր իրավաբանական ուժ ունի:
- 11.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի օրինակը սահմանված կարգով Դպրոցում պահպանվում է հինգ տարի:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Օրինական ներկայացուցիչ՝

Հանրակրթություն իրականացնող

Անձնագիր՝

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի

Անուն՝

.... դպրոց-պարտեզ

Ազգանուն՝

Տնօրեն՝

Ստորագրություն՝

Ստորագրություն՝

Հասցե՝

Հասցե՝

Հեռախոս՝

Հեռախոս՝

Էլ. հասցե՝

Էլ. հասցե՝

Պայմանագիրը լուծվել է հետևյալ պատճառով.

Օրինական ներկայացուցիչ՝ -----

Դպրոցի ղեկավար՝ -----

Սովորող՝ -----